մեզ»։ ԺԱՄԱՆԱԿ. 1268 թ. փրկչական. «Արդ գրեցաւ սա ի թվիս հայոց ՈԺԸ, ի թա՞գուութե՞ն Հեթմոյ բարեպաշտի, ի դիտապետութե՞ն Տ՞ն Յակոբայ (ընդգծուածը յետին գրչով քերուածի վերայ), որ յայսմ ամի կարգեցաւ առաջնորդ ս՞ր եկեղեցւոյ հայկազեան քրիստոնէիցս և յաջորդ աթոռոյ ս՞ր լուսաւորչին մերոյ Գրիգորի. յամսեանն փետրվար, որ աւր ԺԲ էր»։

Դանօր. Վերնագիրները կարմրագեղով. պարբերութիւնների սկզբնատառերը կարմիր երկաթագիր. գլուխների առաջին զիրը գծական—բուսական զարդագիր, միագոյն, գորշ։

Թուականի տասնաւորը քերուած է յիշատակարանի մէջ. պէտք է լինի Ժ, որով և ՉԺԷ թուականը համապատասխան կլինի Յակոբ Կլայեցու կաթուղիկոսութեան առաջին տարուան, համաձայն յիշատակարանի։

Նկարուած է 219ա. բնագիրը 11×11 սմ., մեր նկարը 10×11 սմ., քիչ փոքր բնագրից։

89. Մատ. Ս. էջմ. Գ. № 359/2627։ Աստուածաշունչ, նկարազարդ, նուրբ մագաղաթ. 541 թերթ։ ԳԻՐ բոլորգիր փոքրատեսակ, երկիջեան, 19×5½ սմ.։ ԳՐԻՉՆԵՐ. Յակոբ 141բ և Սարգիս քահանայ (Պիծակ). 250ա, 284ա. վերջինս և նկարիչն է. նա գրել է Նեեմիից մինչև վերջը։ ՍՏԱՑՈՂ և ԺԱՄԱՆԱԿ Յակոբ կաթուղիկոս Կլայեցի (1267/8—1287) հաւանօրէն վաթսունական թուականների վերջերին, երբ արդէն Սարգիս Պիծակ ծեր էր։ Գուցէ Յակոբ գրիչն էլ նոյնը լինի, որ գրել է կաթուղիկոս դառնալուց առաջ. Ստացողի յիշատակարանք 309բ, 399բ. ԿԱԶՄՈՂ. Յովհաննէս սարկաւագ, 541ա., գրութեան ժամանակից նշաններից դատելով։

Վերջին նուիրատուն՝ Եւդինէ տիկին, քոյր Գէորգ Դ. կաթուղիկոսի։

Նկարուած է միայն Սարգիս քահանայի գիրը. 445բ. բնագիրը 19×5½ սմ,, մեր նկարը 11×3 սմ։

90. Մատ. Ս. էջմ. № 365/382 (Կ. 358), Աւետարան. բուղթ 34.2×25,2 սմ.։ Թերթ 353։ ԳԻՐ. Անցման, խոշոր, արևելեան բոլորգիր, որ Մեծ Հայքում ԺԳ. դարում և մասամբ յետոյ գործածւում էր երկաթագրի փոխարէն։ Երկիջեան 25,7×6,7 սմ.։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ. Առաքել քահանայ. ՏԵՂ. Աստապատ գիւղաքաղաք, ընդ «հովանեաւ ս՞ր Վարդանիս»։ ԺԱՄԱՆԱԿ.«(Ե)աւթն հարիւր տասն ութ»=փրկչական 1269 թ.։

Դանօր. Թուականի հարիւրաւորը «եաւթն» է և ոչ գաւառաբարբառով «աւթն»=ութ, որովհետև յիշատակարանի համեմատ Աւետարանիս ստացող Առաքել քահանան մանկութեան հասակում Կարնոյ քաղաքում գիրի է ընկնում Թաթարների ձեռքը և Թաւրէժ բերւում, որտեղից ապա ազատուելով՝ անցնում է Գառնի ուսանելու և այնտեղից Աստապատ իբրև քահանայ։

Նկարուած է 187բ., բնագիրը 14,3×6½ սմ., երկրորդ տողից. մեր նկարը 15,3×6,9 սմ , քիչ մեծ բնագրից։

91. Մատ. Երուս. Ս. Յակ. № 2563/8., Աւետարան ոսկեկազմ, Շղթայակրի ժամանակից, 37,7×24 սմ., մէջքը, 9,2 սմ.։ Ճոխ նկարներով և